


«ԶԳՕՆ» հակառադիացիոն փաթեթի պարունակությունը ենթակա է կիրառման բացառապես ռադիացիոն աղետի դեպքում :

Պարունակությունը

1. Դեղապատիճ կալիումի յոդիդի (KI) 125 միլիգրամը (մգ) պարունակությամբ – 4 հատ
2. Թորած ջուր 21 միլիգրամը (մլ) --- 2 սրվակ
3. Չափիչ գլխիկ - 1 հատ
4. Ուղեցույց



«ԶԳՕՆ» հակառադիացիոն փաթեթի դեղապատիճներից յուրաքանչյուրը կարող է օգտագործվել ինչպես դեղապատիճը խմելու միջոցով այնպես էլ կալիումի յոդիդի (KI) լուծույթ ստանալու նպատակով:

Կալիումի յոդիդը (KI) կիրառվում է ռադիացիոն աղետների ժամանակ վահանագեղձը պաշտպանելու նպատակով և չի պաշտպանում Ձեր մարմնի այլ հյուսվածքներն ու օրգանները:

Կալիումի յոդիդը (KI) օգտագործեք պաշտոնատար անձանց կամ բուժաշխատողների կողմից հրահանգ ստանալուց հետո (Կալիումի յոդիդը (KI) կարող է բացասական ազդեցություն ունենալ այն կիրառողի առողջության վրա կամ առաջացնել անբնական ռեակցիաներ) .

Կալիումի յոդիդը (KI) ցուցված է կիրառման մինչև 40 տարեկան անձանց, հղիների և կրծքով կերակրող մայրերի կողմից: 40 տարեկանից բարձր անձինք կարող են Կալիումի յոդիդը (KI) կրառել միայն երբ ճառագայթահարման հնարավոր վտանգը ավելին է բան կիրառման հետևանքով հնարավոր բարդությունների առաջացումը:


Այն անձինք , որոնք ունեն զգալի առողջական խնդիրներ կամ յոդի հանդեպ անընկալություն, կարող են կիրառել Կալիումի յոդիդը (KI) միայն բուժաշխատողների հսկողությամբ:

Կալիումի յոդիդը (KI) կարող է կիրառվել ինչպես դեղապատիճի ներքին ընդունման եղանակով, այնպես էլ դեղապատիճի պարունակության միջոցով Կալիումի յոդիդի (KI) ջրային լուծույթ ստանալու և լուծույթը խմելու եղանակով (լուծույթը օգտագործվում է երեխաների և դեղապատիճ կոչ տալու դժվարություն ունեցող մեծահասակների համար)


Կալիումի յոդիդի (KI) լուծույթ ստանալու համար անհրաժեշտ է դեղապատիճը բացել և պարունակվող փոշին լուծել 21 մլ թորած ջուր պարունակող տարրայի մեջ (թորած ջուրը 21 մլ ծավալով ներառված է «ԶԳՕՆ» հակառադիացիոն փաթեթի մեջ):

Կիրառման դեղաչափերը ըստ տարիքային խմբերի


1. **Նորածիններ մինչև 1 ամսական** – 1 դեղապատիճի պարունակությունը լուծել 21 միլիգրամ (մլ) թորած ջրի մեջ և ստացված լուծույթից երեխային խմեցնել 2,5 միլիգրամ մլ (չափիչ գլխիկի ստորին գիծը):




2. **Երեխաներ 1 ամսականից – 3 տարեկան** -- 1 դեղապատիճի պարունակությունը լուծել 21 միլիգրամ (մլ) թորած ջրի մեջ և ստացված լուծույթից երեխային խմեցնել 5 մլ (չափիչ գլխիկի երկրորդ գիծը):




3. **Երեխաներ 3 -12 տարեկան** -- 1 դեղապատիճի պարունակությունը լուծել 21 միլիգրամ (մլ) թորած ջրի մեջ և ստացված լուծույթից երեխային խմեցնել 10 մլ (չափիչ գլխիկի երրորդ գիծը):




4. **Երեխաներ 12-18 տարեկան** -- 1 դեղապատիճի պարունակությունը լուծել 21 միլիգրամ (մլ) թորած ջրի մեջ և ստացված լուծույթից երեխային խմեցնել 10 մլ (չափիչ գլխիկի երրորդ գիծը):



5. **Մինչև 18 տարեկան դեռահասները**, որոնք կշռում են 68 կգ-ից ավել, պետք է ընդունեն մեծահասակի դեղաչափ



6. **Մեծահասակներ, հղիներ, կրծքով կերակրող մայրեր** – խմել 1 դեղապատիճ, կամ 1 դեղապատիճի պարունակությունը լուծել 21 միլիգրամ (մլ) թորած ջրի մեջ և ստացված լուծույթը խմել ամբողջությամբ



Կալիումի յոդիդի (KI) ընդունման դեղաչափերը ըստ տարիքի.

Տարիքային խումբը	Կալիումի յոդիդի (KI) դեղաչափը (մգ)	Լուծույթի ընդունման քանակը (մլ)
Նորածիններ մինչև 1 ամսական	15	2,5
Երեխաներ 1 ամսականից – 3 տարեկան	30	5
Երեխաներ 3 - 12 տարեկան	62.5	10
Երեխաներ 12-18 տարեկան (Դեռահասները, որոնք կշռում են 68 կգ-ից ավել, պետք է ընդունեն մեծահասակի դեղաչափ)	62.5	10
Մեծահասակներ 18-40 տարեկան	125 (1 դեղապատիճ)	21
Հղիներ	125 (1 դեղապատիճ)	21
Կրծքով կերակրող մայրեր	125 (1 դեղապատիճ)	21
40-ից բարձր տարիքի անձինք	125 (1 դեղապատիճ)	21